



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19073

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 356-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԿԳ/210-Ա

ՓԱՍՏԱՔԱՆ ԳԱՅԱՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Մեծլումյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի և Կարեն Սարգսյանի կազմով, քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի, քննության առնելով փաստաբան Գայանե Զաքարյանին (արտոնագիր՝ թիվ 432) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Քաղաքացի Վարդուշ Պողոսյանը (**այսուհետ, նաև՝ Դիմող**) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**)՝ հայտնել է, որ 05.03.2018թ. Բերդ քաղաքի դատարանի շենքում իր ամուսնու հետ հանդիպել են փաստաբան Գայանե Զաքարյանին և, իր անունից գործը դատարանում ներկայացնելու համար փաստաբանին հանձնել են փաստաթղթերի բնօրինակներ և, վերջինիս կողմից պահանջված գումարի կեսը՝ 85.000 ՀՀ դրամ, որի վերաբերյալ փաստաբանն իրենց որևէ փաստաթուղթ չի տվել: Այնուհետև, փաստաբանը զանգահարել է իրեն, և պահանջել գումարի մյուս մասը, իսկ քանի որ ինքը ֆինանսական և առողջական խնդիրներ է ունեցել, ուստի փաստաբանին հայտնել է, որ գումարի մյուս մասը կտա գործի ավարտից հետո: Տակայն փաստաբանը չի համաձայնել և իրենց ապրիլ ամսվա թոշակից պահանջել ու 06.04.2018թ. ստացել է նաև գումարի մյուս մասը:

Դիմողը նաև հայտնել է, որ փաստաբանը ստանալով ամբողջ գումարը և փաստաթղթերն, այլևս իրենց չի զանգահարել և տեղեկատվություն չի տրամադրել, իսկ իր զանգերը թողել է անպատասխան: Սակայն մեկ օր առավոտյան Դիմողի կողմից փաստաբանին կատարված զանգին ի պատասխան վերջինս վրդովված ձայնով ասել է, որ. «Մեծ կին եք, ուրիշ բան չեմ ասում, դուք ժամին նայել ե՞ք», այնուհետև զանգն անջատել է:

Դիմողը նաև նշել է, որ բազմաթիվ ուղղություններով փորձել է փաստաբանի հետ

կապ հաստատել, բայց ապարդյուն: Փաստաբանը Դիմողի ծանոթներից մեկի միջոցով փոխանցել է, որ ինքն այլևս փաստաբան չի աշխատում, սակայն Դիմողին հաջողվել է պարզել, որ նա գործող փաստաբան է:

Դիմելով Պալատ Վարդուշ Պողոսյանը խնդրել է փաստաբան Գայանե Զաքարյանին պարտավորեցնել կամ սկսել և ավարտել իր գործը, կամ հետ վերադարձնել իր գումարը և փաստաթղթերը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից 25.04.2019թ. թիվ 151-Ա/ԿԳ-19073 որոշմամբ (**այսուհետ նաև՝ Որոշում**)՝ փաստաբան Գայանե Զաքարյանի (արտոնագիր՝ թիվ 432) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագրքի**) 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների պահանջների խախտման հատկանիշներով:

29.04.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցումները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն՝ ըստ էության վերահաստատելով դիմումով իր կողմից ներկայացված պնդումները:

Դիմողը, ներկայանալով կարգապահական գործով հրավիրված Խորհրդի նիստին, հայտնել է, որ փաստաբանի կողմից գումարը ստանալու դեպքում պայմանագիր կնքելու և ծառայություններ մատուցելու պատրաստակամություն հայտնելու պայմաններում ինքը հրաժարվում է իր կողմից ներկայացված դիմումից:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

17.09.2019թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանողի բացատրությունը, որում Պատասխանողը նշել է, որ Դիմողի հետ պայմանավորվել է իր անունից գործը դատարան ներկայացնելու համար նախապատրաստել փաստաթղթեր: Դիմողից ստացել է 150.000 ՀՀ դրամ, ևս 50.000 ՀՀ դրամ վճարելու դեպքում պետք է կնքեին ծառայությունների մատուցման պայմանագիր, սակայն քաղաքացին նշված գումարը չի վճարել, որի պատճառով իրենց միջև ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել:

Պատասխանողը նշել է, որ ինքը չի հրաժարվում կողմերի համաձայնությամբ պայմանավորված գումարը վճարելու դեպքում պայմանագիր կնքելուց և համապատասխան ծառայություն մատուցելուց, հակառակ դեպքում՝ Պատասխանողը պարտավորվել է վերադարձնել գումարը:

Պատասխանողը հավելել է, որ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ ինքը հայտարարել է, թե փաստաբան չէ, իրականությանը չի համապատասխանում: Դիմողն իրեն զանգել է ուշ ժամի՝ ժամը 12:00-ից հետո, ինքը, քնած լինելով, քաղաքավարի կերպով հանդիմանել է՝ ասելով «Ժամին նայել եք», այլ խոսակցություն իրենց միջև չի եղել:

Պատասխանողը հայտնել է, որ ինքը չի կարող մասնակցել Խորհրդի նիստին:

23.12.2019 թվականին Պատասխանողը Պալատին է ներկայացրել գրություն՝ հայտնելով, որ Դիմողի հետ ինքը կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որը կից ներկայացվել է:

3.3. Վկաների ցուցումները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

Նախապատրաստողը 26.06.2018թ. կազմել է եզրակացություն, որում, թվարկելով գործով ապացուցման ենթակա հանգամանքները, նշել է, որ փաստաբանի վարքագծի խախտման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնելու է Խորհուրդը:

Գործը Խորհրդին է հանձնվել 28.06.2019թ.:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 17.09.2019թ. ժամը 18:30-ին, 10.12.2019թ. ժամը 18:30-ին և 24.12.2019թ. ժամը 19:00-ին Պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը՝ հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Գայանե Զաքարյանի և Վարդուշ Պողոսյանի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ իրավաբանական ծառայություններ մատուցելու պայմանագիր կնքելու վերաբերյալ՝ փաստաբանի կողմից ի լրումն Դիմողից ստացած 150.000 ՀՀ դրամի, ևս 50.000 ՀՀ դրամ վճարելու դեպքում, սակայն սակայն Դիմողը նշված գումարը չի վճարել, և ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված դիմումով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

2. Փաստաբանը պատրաստակամություն է հայտնել Դիմողից գումարի մնացած մասը ստանալու պայմաններում պայմանագիր կնքել և ծառայություններ մատուցել:

Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի բացատրությամբ:

3. Փաստաբան Գայանե Զաքարյանի և Վարդուշ Պողոսյանի միջև 23.12.2019 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ պատվիրատուի շահերը դատարանում ներկայացնելու համար:

Նշված փաստը հաստատվում է իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրով:

4. 24.12.2019 թվականին հրավիրված խորհրդի նիստին Դիմողը հայտնել է, որ փաստաթանի կողմից գումարը ստանալու դեպքում պայմանագիր կնքելու և ծառայություններ մատուցելու պատրաստակամություն հայտնելու պայմաններում ինքը հրաժարվում է իր կողմից ներկայացված դիմումից:

Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի բացատրությամբ:

6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղականքի համաձայն՝ Գայանե Զաքարյանը փաստաթան է հանդիսանում 20.06.2003 թվականից, և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ՝ չհաշված սույն կարգապահական վարույթը: Մասնավորապես՝

Պալատի խորհրդի 15.04.2015թ. թիվ ԿԳ/61-Ա որոշմամբ Գայանե Զաքարյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և կարգապահական տույժը մարվել է:

Պալատի խորհրդի 06.10.2015թ. թիվ ԿԳ/137-Ա որոշմամբ Գայանե Զաքարյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և կարգապահական տույժը մարվել է:

Պալատի խորհրդի 27.02.2019թ. թիվ ԿԳ/33-Ա որոշմամբ Գայանե Զաքարյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ որպես հիմնական տույժ՝ խիստ նկատողություն և լրացուցիչ տույժ՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն՝ Կանոնագրքի 3.1.3 ենթակետի հիմքով, հիմնական տույժը մարվել է, իսկ լրացուցիչ տույժը մարված չէ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաթան Գայանե Զաքարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետք նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաթանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաթանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաթանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանճարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանճարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակական գրավոր ձևով փաստաթանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանճարարությունը փաստացի ստանալուց երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքեր կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքի 3.1.8 ենթակետը սահմանում է, որ փաստաթանն իրավական օգնություն ցույց տալու հանճարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ

որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Կանոնագրքի վերոգրյալ դրույթները փաստաբանի համար պարտականություն են սահմանում՝ բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր վերաբերելի միջոցները՝ վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

ՄԱԿ-ի 1990թ. «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, *inter alia*, «իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը» (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ. Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է (կետ 3.1.2.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ փաստաբանների հատուկ դերակատարումը, արդարադատության իրականացման հարցում որպես անկախ մասնագետների, իր մեջ ներառում է մի շարք պարտավորություններ, հատկապես այն դեպքերում, երբ այն վերաբերում է նրանց վարքագծին: Չնայած փաստաբանները ենթակա են սահմանափակումների իրենց մասնագիտական գործունեության մեջ, որոնք պետք է լինեն շրջահայաց, արդար և ազնիվ, նրանք միաժամանակ օգտվում են բացառիկ իրավունքներից և արտոնություններից, (Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 29369/10, ՄԻԵԴ, § 133): Փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխղճորեն, այլ նաև իր վստահորդի շահերը պաշտպանել եռանդուն կերպով, որը նշանակում է, որ երբեմն նրանք պետք է որոշում կայացնեն, թե արդյոք նպատակահարմար է առարկել կամ բողոքել դատարանի գործողությունների դեմ (Տե՛ս Մորիս, § 137):

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝ կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Կարգի վերոնշյալ իրավադրույթներից հետևում է, որ դիմողը պարտավոր է ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնք Պալատի մոտ կարող են ձևավորել ողջամիտ համոզմունք, որ դիմումում նշված փաստական հանգամանքներն իրականում տեղի են ունեցել, և առկա է կարգապահական գործով պատասխանող փաստաբանի կողմից թույլ տրված՝ Օրենքով և Կանոնագրքով արգելված արարք: Մինևս սույն ժամանակ, կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և նույն կարգի դրույթներին համապատասխան պետք է մեկնաբանվեն հօգուտ Պատասխանողի:

Սույն կարգապահական գործի փաստերից հետևում է, որ փաստաբան Գայանե Զաքարյանի և Վարդուշ Պողոսյանի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ իրավաբանական ծառայություններ մատուցելու պայմանագիր կնքելու վերաբերյալ՝ փաստաբանի կողմից ի լրումն Դիմողից ստացած 150.000 ՀՀ դրամի, ևս 50.000 ՀՀ դրամ վճարելու դեպքում, սակայն սակայն Դիմողը նշված գումարը չի վճարել, և ծառայությունների մատուցման պայմանագիր չի կնքվել: Հարկ է նշել, որ փաստաբանը պատրաստակամություն է հայտնել Դիմողից գումարի մնացած մասը ստանալու պայմաններում պայմանագիր կնքել և ծառայություններ մատուցել:

Ընդ որում, փաստաբան Գայանե Զաքարյանի և Վարդուշ Պողոսյանի միջև 23.12.2019 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ պատվիրատուի շահերը դատարանում ներկայացնելու համար: Իսկ սույն գործով 24.12.2019 թվականին հրավիրված Խորհրդի նիստին Դիմողը հայտնել է, որ փաստաբանի կողմից գումարը ստանալու դեպքում պայմանագիր կնքելու և ծառայություններ մատուցելու պատրաստակամություն հայտնելու պայմաններում ինքը հրաժարվում է իր կողմից ներկայացված դիմումից:

Ղեկավարվելով վերոգրյալ իրավական նորմերով և հիմք ընդունելով սույն կարգապահական գործում առկա փաստական տվյալները՝ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ գործում առկա տվյալների համաձայն՝ Դիմումով փաստաբանին վերագրվող վարքագծի քննարկումն այլևս առարկայազուրկ է, իսկ փաստաբանին

կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չէ:

Պալատը գտնում է, որ գործում առկա ապացույցները բավարար չեն, որոնք կարող էին վկայել Պատասխանողի կողմից Կանոնագրքի խախտման մասին, ուստի Պատասխանողի կողմից վերոգրյալ դրույթների խախտման փաստը հանդիսանում է չապացուցված:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Խորհուրդը գտնում է, որ սույն գործով հաստատված չէ փաստաբան Գայանե Զաքարյանի կողմից Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների խախտման վարքագծի առկայությունը, ուստի կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով՝ Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 25.04.2019թ. թիվ 151-Ա/ԿԳ-19073 որոշմամբ փաստաբան Գայանե Զաքարյանի (արտոնագիր՝ թիվ 432) նկատմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.3, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի, 3.8.5 ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Մեծլումյան

**24 դեկտեմբերի, 2019թ.
թիվ ԿԳ/210-Ա
ք. Երևան**